


1061

391-71-~~15~~  
7-57



Եր ամերիկ տիկին Դունք Քաղաքարք յիշատակին ներ

1869 ՀԱՅՐԱՊԵՏ ՔԱՂԱԿԱՐԻՑ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՅ ՀՐԱՏԱՐԱԿՅԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

89. Պ. Մ.

№ 159

Դ-57 ար

# ՄԱՆՉՈՒԿՆ ՈՒ ԿՈՒՏԻԿԵԼ

2004.

Զ Բ Ա Յ Յ

Վ. Ի. Դ Մ Ի Տ Ի Ե Վ Ա Յ Ի



ՊԵՐ ՊՐՈՇԵԱՆՑ

467

ԹԻՖԼԻՍ

Արագատիա Մ. Մարտիրոսեանցի  
Միքայէլեան փողոց, տուն № 81.

1899

# ԱՐԴՅԱՋ ԱՅ ԺԻՎԱՅՐԻ

Дозволено цензурою. Тифлисъ, 22-го Января 1899 года.

Ա.



Ս ի օր մայրը Մանչուկի կոնից բռնած՝ բերեց ուսումնարան:

Վարժուհին շատ զարմացաւ:

— Գառնուկս, ինչքան փոքր է. քանի տարեկան կլինի:

— Արփիկս տարի ու կիսկան էր, որ սա աշխարհ եկաւ. հասնենք խոտհընձի պասը՝ Արփիկիս ութ տարին կլրանայ, ամօթխածութիւնով պատասխանեց Սանամը. երանի էր այն օրին. տէրս գլխիս կանգնած էր: Ա՛խ, ինչ կլինէր, որ կամ ալըէր, բոլորին մեծացնէր, կամ այնպէս մեռած լինէր, որ սա վերջինը լինէր, մի ուրիշ աղջիկ էլ սրանից յետոյ շթողնէր ու այս սկ օրը շբերէր մեր գլխին:

Վարժուհին գլուխը բացասաբար շարժեց:

— Ո՞չ, քուրիկս, ընդունել չենք կարող. պահելու տեղ չունինք, նեղուածք ենք. դու էլ այս ծծկերին բերել ես, թէ ընդունեցէք. բերանիցը դեռ կաթնահոտը գալիս է: Ո՞չ, չենք կարող:

— Ոտքերդ եմ ընկնում, օրիորդ ջան, կոանալով ինդրեց Մանչուկի մայրը. ինչ անեմ, քեզ մատաղ, մնացել եմ սրա ձեռքին մոլորած. գլխիս տիրոջն Աստուած ձեռքիցս առաւ, մնացինք անտէր: Եօթն

Երեխայ են, իրար զլխի ծնած. այս մէկն է տղայ,  
որ անունը Վահան է, բայց կնքաւորն Արգրումցի  
էր, նրա պատուին՝ Մանչուկ ենք ասում. մնացած-  
ներն աղջիկ են: Աշխարհքը գլխիս մթնել է:  
Աղջկանցը մի տեսակ կառավարում եմ, ամեն մէկի  
ձեռքը մի գործ եմ տալիս՝ նստացնում. այս կրակի  
կտորի ձեռքին ենք մոլորուել. ինքը մէկ՝ ու բո-  
լորին սասանեցրել է: Ոտքերիդ մեռնիմ, օրիորդ  
ջան, վեր կալ, թող այստեղ մի քնչում ընկած մնայ:

Օրիորդ զողակաթը ձայնը կտրել էր ու Ման-  
չուկին մտիկ տալիս. երեխան կանգնել էր ու աշ-  
քերը պլազցրել՝ զողակաթին նայում. գետնի երե-  
սին չէր երևում—այնքան փոքր էր. մի քըքրուած  
արխալուղ ունէր հաղին. մի ահագին ոչխարենի,  
բուրդը հարիւր տեղից տուած, զզզզուած գտակ  
ունէր, որ մօր հրամանով հանել էր ու ձեռքին բըռ-  
նել: Նրա առանց այն էլ սուր քիթը ձկնկուլի  
կտուցի նման երկարացել էր. Նրա գլուխը խոր  
խուզած էր: Այնպէս սիրուն էր Մանչուկը, որ վար-  
ժուհին չհամրեց, մի ձեռքով ծնօտը բռնեց,  
միւսով կամաց կամթեց նրա ալ վարդի պէս թշի  
ծայրը:

—Ախար ես սրան ինչ անեմ, ասաց ժպտալով  
վարժուհին. կարծեմ բերանումը լեզու էլ չկայ.  
խօսել էլ չէ կարող, այնպէս չէ:

—Հըը՝ մմմ, ոտքերիդ դուրբան, օրիորդ. դու  
սորան մէկ աշքով մի մտիկ տար. պստիկ է բայց  
ճստիկ է, ցեց ու պատիժ է: Գլուխս տարել է, թէ  
տար ինձ ուսումնարան: Մանչուկս, ինչ ես պա-  
պանձուել, դարձաւ Մանամը զաւակին, քիթը ձեռ-

քով սըբելով. ուր է քո լեզուդ. շնորհքդ ցոյց տուր,  
խօսիր օրիորդի հետ, թէ չէ սա իր մտքումը կա-  
սէ, որ լեզու չունիս, խօսել չգիտես:

Մանչուկը քիթը թափ տուեց, գտակը ձեռքի  
վրայ պտոյտ տուեց ու ասաց.

—Ես մի կուտիկ ունիմ:

—Այդ ինչ կուտիկ է, ծիծաղելով հարցըց զո-  
ղակաթը:

Վարժուհու ծիծաղի վրայ Սանամի սիրտը ցըն-  
ծաց. նա սիրտ առաւ ու ասաց. «մի քնձուոտ լա-  
կոտ է. էլ ձեռք չէ քաշում. ողջ օրը շես կարող բա-  
ժանել իր կուտիկից:

Խոկի էլ քնձուոտ չէ, քիթն ուոցնելով ասաց  
մանչուկը. շատ լաւն է, զուխտ թոների վրայ կան-  
գնում է ու . . . Այ, հրէ, հա:

Մանչուկը մատը լուսամուտի կողմը մեկնեց և  
ցոյց տուեց փողոցում՝ դունչը ցից, ականջները  
կախ, աշքերը պատուհանին դարձրած՝ սպասող  
բըդոտ ու զզզզուած շանը:

—Տեսնում ես, հրէ, հա, տես ոնց է պպղել,  
ուրախ-ուրախ ասաց Մանչուկը. զիտես, ինձ է  
սպասում: Կուտիկ, կուտիկ, կուտիկ. Փիւշ, Փիւշ,  
Փիւշ: Այնպէս սուր շուացըցնա յանկարծ, որ մօր  
սիրտը դող ելաւ:

—Դէ, փուշ կենդանի, չար ու պէծ կրակ,  
բարկացած ասաց մայրը. էդ ինչ արիր, օրիորդը  
հիմա ինչ կասէ իր մտքումը. սա քեզ պէս չար  
պատժին էլ կընդունէ:

Օրիորդի աշքերը ջրակալեցին—այնքան ծիծաղեց  
Մանչուկի և իր կուտիկի վրայ: Ճնիկը հէնց որ իր

տիրոջ ձայնը լսեց՝ վեր վեր թռչելով սկսեց հաջել։  
— Գա՞տ լաւ, շա՞տ լաւ, թողքով ասածը լինի,  
կրնդունեմ։

—Թէ Աստուած կսիրես, օրիորդ ջան, քո գիտցածի պէս թըլսկացրու. շխնայես, շլողնես գժութիւն անէ, միսը քեզ՝ ոսկորն ինձ: Լսեցիր, Մանչուկ. Էգուցուանից դու աշակերտ ես, օրիորդի Մանչուկն եօ:

— Ի՞նչ կայ որ, շատ լաւ, ուրախացաւ Ման-  
չուկն ու Կրկին քիթը թափ տուեց:

— Մտիկ տուր. լաւ կարդա, զլուխ տուր օրիորդին, շնորհակալութիւն արա. այսուհետև սա է քո մայրը. ձեռքը պաշիր. լսեցիր:

—Խուլի հօ չեմ:

Նըանք գլուխ տուին վարժուհով ու դուրս եկան։  
Պուտիկն ուրախ-ուրախ, կողկոնձալով՝ մօտ վագեց  
իր տիրոջն ու սկսեց թռչկոտալ, Մանչուկի երեսը  
լիզել։ Իսկ զողակաթը կանգնել էր լուսամուտի առ-  
ջին և զուրս մտիկ տալիս։ Նա լսեց Մանչուկի խօս-  
քերը, որ ասաց իր կուտիկին. զտակը գլխին խոր  
հուպ տայով.

—Գիտես ինչ, կուտիկ. ես էգուցուանից աշակերտ եմ. հիմիկէց յետոյ՝ ինձանից հեռու հեռու ման արի:

Կուտիկն ուրախութիւնից մի-երկու անգամ թաւալ տուեց զետնին ու բարձր ձայնով հաշելով՝ առաջներին վաղում էր. իսկ Մանչուկն ուռած ու փքուած՝ ձեռքերը գըպանն էր դրել, մօր հետ գընում էր. ահազին ոչխարենի գտակի տակին նրա երեսը համարեած կորել էր, չէր երևում:

Ամենամուշ տօն վիստավանցը թեզ գո սահ-  
մ, եաւունչ ցեղամցիմն **Բ.** զնուանձ սահն յունի դո-  
ցեցուաց և առանձն ունց յանեց թեզ վիսի կօնս  
անիքընչ և առարան սահ բւշեցնցաւ և ու ման

Հէնց որ միւս օրը Մանչուկն իր կուտիկը յետեղ ձգած եկաւ ուսումնարան՝ աշակերտները դուրս թափուեցին և սկսեցին ծաղրել նրան:

Տեսէք, տղէք, տեսէք. սար է, սար, աժդահան է,  
աժդահան. գլուխն երկնքումը, ոտքերը գետնքում:  
Հապա փափաթիզը, արագլի բնից մեծ է: Ճանն ինչ  
կասէք, շանը. հինգ իմանաս ջաղացի գերբանք լի-  
նի . . . չա, հա, հա . . .

Մանչուկը բոլորովին ուշագրութեան չառաւ ա-  
շակերտների նկատողութիւնները, քիթը միայն վեր  
քաշեց վրաները: — Եթեադադում են՝ թող ծիծագեն:  
տեսնենք իրանք իմ կուտիկիս պէս շուն ունին:  
Գտակիս ինչն է պակաս, շատ լաւն է. գլուխս բաղ-  
նիսի պէս տաք է պահում. հօրս գտակն է, մէրս  
ինձ տուեց, հէրս մեծ մարդ էր. ինչ անեմ թէ իմ  
զլուխս պստիկ է. մի օր ես էլ կմեծնամ: Վարժու-  
հին լսեց ու Մանչուկին պաշտպանեց:

— Համարձակուիք Մանչուկի վրայ ծիծաղել, բարկացաւ նա չարեցի վրայ. փոքրիկներին ծաղ- ըողին Աստուած Խոտիկ կկենայ:

—Դու սրան, օքիո՞րդ, Մանուշակի ու Նարկիզի  
կողքին նստացըու, թող աղջկերանց հետ տիկին  
խաղայ, պատապխանեց ամենից չար աշակերտը:  
Նորից հոհողն ընկաւ:

Մանուչակն ու Նարպիզն աշակերտուհիներ էին,  
վարժուհին նորանց կար ու ձև էր սովորեցնում:

— Տես որ քեզ զբատախտակի մօտ չնստացնեմ, որ մենակ մնաս հեռւումը, ընկերներից ջոկուած, և ամօթ լինի քեզ համար. չես ամաշում. բոլորից մեծն ես և շարութիւնդ չես թողնում, յանդիմանեց զողակաթը:

Փոքրիկ չարերը ձայները կտրեցին ու Մանչուկին մտիկ տալով սկսեցին իրար հետ կամաց քչփչալ, — իրաւ որ Մանչուկ է:

Դամն սկսուեց: Մեծ աշակերտները խնդիրներ էին լուծում, իսկ փոքրերը նոր-նոր տառեր էին սովորում: Մանչուկը վերջիններիս կողքին նստել էր և բարձր ձայնով ծոր տալիս. — «քա, գա, գա...»: Իսկ նրա սիրելի կուտիկը կալումը, թաթերը ծնոտի տակը դրած, աչքերը պլշած՝ սպասում էր իր տիրոջը: Հենց կարծես հասկանում էր կուտիկը, որ իր տէրը հարկաւոր գործով է զբաղուած: Մէկ-մէկ՝ գլուխը բարձրացնում էր չնիկը և նայում լուսամուտին, որտեղից երևում էր տիրոջ գլուխը. շունն ականջները խլացրած՝ լսում էր նրա երգելով հեգելը:

Երկրորդ դասին եկաւ տէրտէրը, կանչեց Մանչուկին և սիրտ տալով ասաց.

— Ապրի իմ տղան, Աստուած օրննէ քեզ, ինչ կտրին է. ասա ինձ տեսնեմ, աղօթք գիտես:

— Ի հարկէ դիտեմ, վստահ պատասխանեց Մանչուկը:

— Ասա տեսնեմ, ինչ աղօթք գիտես:

— Մայր Աստուածածին, մեզ պահես. սուրբ Կարապետ, քեզ դուքքան, մատաղ անեմ՝ դու ընդունես: . . .

Տէրտէրը ծիծաղեց ու ձեռքը Մանչուկի գլխին քսեց. իսկ երեխան սիրտ առաւ և սկսեց ազատ, համարձակ վրայ տալով պատմել՝ ինչ որ գիտէր:

Բանից դուրս եկաւ, որ Մանչուկը գիտէր, որ երուսաղէմ կայ, Քրիստոսի գերեզմանն այնտեղ է. Զատկին՝ գերեզմանից լոյս է դուրս գալիս և եկեղեցին լուսաւորում. որ այդ լոյսը մղղսի գնացող ուխտաւորները քսում են իրանց միջուքներին, և չէ խանձւում. որ իր մօրապանն էլ զնացած է եղել երուսաղէմ՝ Քրիստոսի գերեզմանին ուխտ անելու և մղղսի զառնալու. որ իր մօր ասելով՝ իր պապի կոները մինչև արմուկը կապուտ ներկով նկարած են եղել...,

— Ապրիս, ապրիս, քաջալերեց տէրտէրը և Մանչուկի աջ ձեռքը բռնելով՝ խաչակնքել սովորեցրեց և մի քանի անգամ հետը կրկնեց.

— Յանուն Հօր և Որդոյ և Հոգւոյն սրբոյ. ամէն: Խաչ, օգնեա ինձ:

Այսպէս յաջող անցաւ Մանչուկի ուսման առաջին օրը: Տուն վերադառնալիս՝ նա ճանապարհին ուրախ-ուրախ շշւացնում էր ու բարձրածայն երգում. բա, գա, դա...

Կուտիկը տիրոջ յետեկից ընկած՝ հպարտ-հպարտ չորս կողմն էր նայում. կարծես ուզում էր ասել. — Հը, տեսնում էք, մենք էսօր ինչ ենք. ուսումնարան ենք զնում, ուսումնարան:

միջիք վերաբեր Ա յզրում ու զարանի պահացը  
տարա շնչի և առա աղջի մասնացք թայ դադոց  
այժմամբ ու չէ յմաս գ. խոյա լայի թանգառուն  
ու շնչամբ յըլուզւն ու առա այսոք ըժման  
և բնակի մասնացք հասուսից զայ նշրանցը  
Գիտէք, ինչ լաւ աշակերտ դուքս եկաւ Ման-  
չուկը: Պէտք է ասած, որ վարժուհին նրան օրի-  
նաւոր աշակերտի տեղ չէր դնում. ոչ կարգին դաս  
էր տալիս, ոչ կարգին դաս էր հարցնում. խաղերով  
ու կատակներով օրական մի բան սովորեցնում էր:  
Մանչուկը բոլոր դաս տուածը ջրի նման սովորում  
էր և ոչ ոքից յետ չէր մնում: Այդ բոլորը շատ լաւ,  
բայց շ տառը խեղճ Մանչուկի հոգեհանն էր դառել.  
ինչ անում էր, չէր անում՝ նրա լեզուի տակից շ  
տառը չէր դուքս գալիս: Թէկուզ ծործորակդ քե-  
րիր, թէկուզ թշերդ ուոցը, թէկուզ կատիկիդ  
հուզ տուը՝ և է դուքս գալիս, շ չէ լսում: օրի-  
նակ՝ ձեռքիդ բոնում ես շաքարի կտոր.—Մանչուկ,  
ասում ես, այս ինչ է:

—Սսս . . . սաքար, պատասխանում էր նա: —  
Շաքարը քեզ, բայց եթէ շուշուխի փոխարէն սուշուխ  
ասես՝ այս անուշ շուշուխից կզրկուես, հանում և  
ցոյց էր տալիս Երևանի փափուկ շուշուխի համեղ  
կտորը:

—Սսս . . . սուշուխ, ասում էր ու կարմրելով  
ձեռքը մեկնում:

—Ասա, զուշանը շուշուխ է շարում, իրար աշքով  
անելով՝ ծաղրում էին խեղճ Մանչուկին ընկերները:

Մանչուկը ձայնը կտրում էր և դառնում վար-  
ժուհուն.

—Օրինք, սրանք ինձ ծաղրում են, ասա չծի-  
ծաղին:

—Ոչինչ, սրտիդ մի առներ, Մանչուկ չան. թող  
այնքան ծաղրեն՝ յոգնեն. բոլորովին մի էլ լսեր.  
սպասիր, մի տարուց յետոյ դրանցից լաւ կկարդաս:  
ես տէրտէրին կխնդրեմ, Զատկին քեզ ժամումը  
շապիկ կհացնէ, մոմ կբռնես. ջրօրհնէքին էլ ժա-  
մաշապիկ կհագնես, «Համբարձին» կասես:

—Կերպ, լսեցիք, ուրախ ու զուարթ դառնում  
էր Մանչուկն իր ընկերներին:

—Մատ լաւ, սատ լաւ, պատասխանում էին չա-  
րաճնի ընկերներն և Մանչուկի սիրտը նորից ցա-  
ւացնում:

Միայն այս անտէլ շ տառն էր Մանչուկի սիր-  
տը կոտրում, թէ չէ ամեն բանը լաւ էր զնում:  
Բոլոր աշակերտները նրան սիրում էին. դասամի-  
ջոցներին՝ մինը սպիտակ լաւաշահցի մէջ վախա-  
թած քուֆթի կտորն էր իր ձեռքով բերանը զնում,  
միւսը տումի գունդն էր համեցէք անում, երրորդը  
խնձոր, տանձ, դեղձաշիր, վշատ և ուրիշ միրգ  
էր բուռը կոխում:

Նրա կոտրիկն էլ զուրկ չէր մնում, շան ատամի  
տակն էլ մի բան ընկնում էր. բոլոր աշակերտները  
կուտիկին սիրում էին. ասում էին. —սատկիր, կու-  
տիկ, և չնիկը մէջքի վրայ ձգում էր ու թաթերը  
վեր բարձրացնում, պոշը զետնին թփթփացնելով:

—Կուտիկ, հարեւանի հաւերը քշիր: նոյն ըուպէին  
մնդստալով ընկնում էր օտար հաւերի յուտից ու  
հալածում: —Կուտիկ, կատուն, նշան էր տալիս  
մինը, և Կուտիկը կատուին մինչև աշխարհի ծայրն

Էր փախցնում: Ինչ չնորհք ունէր կուտիկը՝ աշակերտների խաթեր չէր խնայում. Նրանք էլ հոհրում, կշկում էին:

— Ապրիս, կուտիկ, ապրիս, հալալ է այս պանրի կտորը, բարձրացնում էին պանիրն երեխալը: Կուտիկը թռչում էր ու հափփ, բռնում. ոսկրի կտորտանքը հօ անծամել կուլ էր տալիս:

— Իրաւ, լաւ շուն է, Մանչուկ, դառնում էին ամեն կողմից. ովտեղից ես ճտրել, ափսոս որ մի քիչ շատ է գզզուած, բուրդը տուած, սիրուն չէ:

Ճիշտ որ տեսքով տգեղ էր կուտիկը. բրդի փոխարէն՝ հէնց իմանաս աղբանոցից հաւաքած փալասի կտորներ էին վրան կախկախոտուած. բրչկակալած (բըդոտ) ականջներն ու բուրդը տուած պոշը ողջ կոշտերի մէջ էին, դունչը բշտրշտոտած էր. մի սիրուն բան որ ունէր՝ աշերն էին, խոշորխոշոր, պսպղուն, գեղին սաթի նման վառւում էին ու մարդի սիրտ զրաւում էին. աշերի սե-սկ պըտուղներից խելօրութիւնը թափում էր. տեսնողը կասէր, հէնց հիմի որտեղ որ է՝ կուտիկը մարդի պէս լեզու կլինի, կխօսի. ձեռաց՝ մտքինդ հասկանում էր, ասածդ գլխի էր ընկնում:

Մենք չասացինք, թէ Մանչուկենք Ա. գիւղումը չէին բնակւում, որտեղ ուսումնարանն էր. ձորն անց՝ գետի միւս երեսին մի պստիկ զիւղ կար, Մ. գիւղը: Մանչուկենց տունն այնտեղ էր: Բայց արի տես, որ Մանչուկը բոլորիցը վաղ էր ուսումնարան գալիս: Դեռ նոր լոյսն երդկովը տուն էր ընկած լինում՝ մէկ էլ վարժուհին իր երես տան, գլխի նստացնեն. լակոտը հերիք չէ, մուռտառ շանն էլ է բերել,

էր, որ ուսումնարանի պատշգամումը մինը ձնոտ ոտքերը թափ է տալիս:

— Դու ես, Մանչուկ, ներսից ձայն էր տալիս զողակաթը:

— Հրաման քեզ, օրիորդ, ես եմ:

— Մըսէլ ես:

— Ոչ, ես մըսել չեմ, բայց կուտիկս մի քիչ սըթսըթոցն է ընկել, պատասխանում էր դրսից խորամանկ Մանչուկը:

Վարժուհին իսկոյն հասկանում էր Մանչուկի սատանութիւնը, ժպտում ու ասում էր.

— Խեղճ իմ կուտիկ. դէ, վնաս չունի, թող վըրայի ձիւնը թափ տայ, ու ներս բեր, տաքանայ:

Մանչուկին այդքանն էր հարկաւոր. նա դուռը բաց էր անում, և կուտիկը, մազերը թափահարելով ներս էր խցկում ու գալիս զողակաթի առաջին չնորհակալութեամբ պոշը մի քանի անգամ շարժում ու գնում վառարանի դիմացը պպղում:

Այդ ժամանակ տուն էր գալիս ժամհար Մկօյի հարսը, սըրում էր սենեակը, վեր էր քաղում, կարգի էր բերում և հեշտայեռը տանում դնելու: Մանչուկն ինքն էլ իր կողմից օգնում էր ժամհարի հարսին. ածուխ էր բերում, ջուր էր լցնում: Կուտիկն էլ ուզում էր օգնած լինել իր տիրոջը. գլուխը կախում էր ածուխի արկղի մէջ ու թաթերով քանդքնդում: Բայց ժամհարի հարսը հին կին էր, այդպէս բաներ նորան դուր չէին գալիս. վնթվնթում էր իր մէջ վարժուհու յետեից.— Այս ինչ է, ով է տեսած որ լակոտի մէկին երես տան, գլխի նստացնեն. լակոտը հերիք չէ, մուռտառ շանն էլ է բերել,

տան վերի կողմը բազմացրել. գոնէ կատու լինէր՝  
ով դարդ կանէր, կատուն Քրիստոսի ազլուին է...»

— Եէ, սուտ ես ասում, հակաճառում էր Ման-  
չուկը. մուռտառը կատուն է, որ թէկուզ գառան  
խորովուն բերանիցդ կտրես, իրան ուտացնես՝ այն  
ըոպէին շանգով կտայ, աշքդ կհանէ, երես-մերեսդ  
ծուիկ-ծուիկ կանէ:

— Սուտը դու ես, կատուն եթէ ժամն էլ մտնի՝  
ոչինչ, բայց շանը ժամ չեն թողնում:

Մանչուկը չէր կոտրում. այնքան էին վիճում,  
վիճարանում ժամհարի հարսի հետ, որ հեշտայեռը  
քլրլթում էր: Երբեմն վէճն այն տեղն էր հասնում,  
որ ժամհարի հարսը մոռանում էր ժամանակին հեշ-  
տայեռի փողովակը վրայից վերցնել: Եռման ջուրը  
բարձրանում էր ու հեշտայեռի կողքերից թափում:  
Այսեղ սկսում էին իրարոցով դիպչել, ժամհարի  
հարսը հեշտայեռի խուփն էր պտուտում, Մանչուկը  
տաք փողովակն էր հանում և դաղուած ձեռների  
ափերը լավատում: Կուտիկը պոշը փորատակն էր  
կոխում ու հեռուում կուչ զալիս, իսկ վարժուհին  
լուսամուտից նայում էր ու խնդում, զուարճանում:

— Բոլորը դու ես մեղաւոր, կրակի պէծ, մըրթ-  
մըրթում էր ժամհարի հարսը. հետդ խօսքի բռնուե-  
ցի, հեշտայեռը թափուեց:

— Դէհ, միւսանգամ էլ հետս վէճ մի մտներ,  
նմանն անելով ու ծաղրելով բարկացնում էր ժամ-  
հարի հարսին Մանչուկը:

— Հերիք, հերիք, Մանչուկ, արի, մի բաժակ թէյ  
խմիր, որ սիրտդ նստի, ձայն էր տալիս վարժուհին:

Մանչուկը նազ ծախող չէր. ոչխարենի գտակը

շպրտում էր սենեակի դռան տակ ու ցցում հեշ-  
տայեռի կողքին: Վարժուհին թրչած լաւաշ ու մի  
կտոր պանիր դնում էր մէջ տեղ ու մի մեծ գաւաթ  
թէյ լցնում, առաջը դնում: Մանչուկն առաջ թէյի  
անունը լսել էր ու աշքով չէր տեսել: Վարժուհին  
նրա ճաշակը զարգացընեց: Այն օրից՝ Մանչուկի  
խելքը թռչում էր թէյի համար, մանաւանդ երբ  
երկու կտոր շաքար բաժակի մէջը ձգելուց յետոյ,  
զողակաթն երրորդ կտորն առաջն էր դնում ասելով,  
եթէ քաղցը չէ՝ աւելացրու: Բայց Մանչուկը շաքա-  
րի կտորը միշտ յետ էր տանում և դնում սեղանի  
վրայ:

— Քեզ քանի եմ ասել, որ շաքարդ յետ մի բե-  
սեր, քո թողած կտորն ով կուտէ. վեր կալ, վեր  
կալ, զրպանդ դիր:

— Ուրեմն կտանիմ մեր Ղումաշին, ասում էր  
Մանչուկն ու զրպանը կոխում:

Ղումաշը Մանչուկի ամենից փոքը քոյրն էր,  
որին նա շատ սիրում էր: Եթէ պատահում էր, որ  
վարժուհին Մանչուկին միրգ էր տալիս՝ նա չէր  
ուտում, պահում էր Ղումաշի համար:

— Կեր ինքդ, ասում էր զողակաթը, Ղումաշի  
համար ուրիշը կտամ:

— Որ շուտեմ, քաղցած հօ չեմ թուլանայ, պա-  
տասխանում էր Մանչուկը. լաւաշն էլ ինձ հերիք է.  
Ես մեծ եմ, իսկ Ղումաշն երեխայ է:

— Ես առաջ ու մաս մաս պատճեն ով կույցից  
մի ու շաբախ նույնի մէդիք է Եղան անձը գույնը  
հայուր նոն մի ու բան զի ով նույն դիմայ զույնը

Մի անդամ Մանչուկն եկաւ ուսումնարան տըր-  
տում ու տիսուք: Ո՞չ վառարանին մօտեցաւ նա այդ  
օրը, ոչ ընկերների հետ խօսք ու զըոյց արաւ, ինչ-  
պէս սովորաբար անում էր. ձայնը կոտրած՝ մտել էր  
քունչն ու կծկուել, կարծիս տղաթեւած հաւի ճուտ  
լինէր: Կուտիկն էլ այսօր մի ուրիշ տեսակ էր.  
խիստ սիրտը կոտրուած էր երկում. պոչը փորա-  
տակն էր կոխել, ականջները քաշ էր ձգել ու իր  
տիրոջ երեսին նայում:

— Այդ ինչ է, Մանչուկս, հարցրեց վարժուհին,  
հիւանդ հօ չես, ինչդ է ցաւում:

— Ոչինչ . . . բան չկայ, հազիւ քշփշաց Ման-  
չուկն ու աւելի կնճռուտուեց: Կուտիկն էլ տիրոջ  
հետ մի խոր յոգուց քաշեց և պոշը զետնովը տուեց:

— Ախար ինչ կայ, ասա տեսնեմ, անհանգստու-  
թեամբ հարցրեց Չողակաթը:

— Նրանք . . . այսօր . . . է է է ս ս . . . չունին  
. . . հեկեկաց և սիրտը չէր կարողանում բռնել Ման-  
չուկը. մղկտում էր նա ու աշքերը թեքերով սրբե-  
լով՝ ցոյց էր տալիս ձեռքին բռնած հացի կտորը:

— Ի՞նչ, ինչ ասացիր, ով ինչ չունի:

— Այ, հաց էլի . . . մերոնք . . . այսօր . . . ուտե-  
լու հաց . . . չունին . . . Կումաշը . . . քաղցած է . . .  
Մանչուկը չկարաց իրան զսպել, աղի արտասունքով  
կսկծալով լալիս էր, բայց հացը ձեռից բաց չէր  
թողնում:

— Երան որ Մանչուկ ես, հոգի ջան, յուզուած  
ու վրդովուած ասաց վարժուհին. էլ ընչի՞ այսքան  
ժամանակ քիթդ կախել էիր ու նստել. վաղուց  
կասէիր, է. Գիտէս ինչ եմ ասում, Մանչուկս. լաց  
մի լինիր, ինձ լսիր. այ, այդպէս, ապրիս. հէնց  
հիմի քեզ հետ կղնանք հացատունը, որքան լաւաշ  
սիրտդ կցանկանայ՝ կարմիր կծկուծներիցը չոկինք,  
տանք ժամհարի հարսին և ուղարկենք մայրիկիդ.  
դասից յետոյ վեր կիբնանք ես ու դուն, կերթանք  
ձեր տունը: Հա, լաւ չեմ ասում:

— Լաւ . . . հեծկլտոցը շարունակեց Մանչուկը:  
— Կումաշն էլ սոված չի մնայ, նրա համար մեղ  
հետ պանիր էլ կտանենք:

— Կումաշն էլ . . . կըկնեց Մանչուկն և քիչ  
ժպտաց. ծիծաղկոտ երեսով ու արտասունքոտ աշ-  
քերով նա մտիկ տուեց վարժուհուն:

— Դէ տեսամ որ լաւ բան ասացի, ուրեմն լացդ  
թող:

— Ես Կումաշի համար էի լալիս, ուզեցաւ ար-  
դարանալ Մանչուկը. ախար նա երեխայ է, ոչինչ  
չէ հասկանում. մայրիկս ասում էր՝ հաց չունինք,  
նա նստել էր ու զուում . . . մայրիկս բռնեց ու լաւ  
ծեծեց . . . իմ սիրտս էլ ցաւեց. ախար խեղճ է  
Կումաշը . . . երեխայ է . . .

Նորից Մանչուկի աշքերը լցուեցին. շբթունք-  
ներն ուոցը նա և զլուխը կախեց. . . քիչ մնաց՝  
արտասունքը թափւում էր, եթէ վարժուհին կուը  
չըրնէր ու հետը շտամէր հացատունը:

— Դէհ, Մանչուկս, ասա ինձ, քանի հաց կուզես  
որ ուղարկենք:

Արտասունքը ձեռաց շորացաւ. նա մտածմունք-ների մէջ ընկաւ:\*)

Տաշտում ծալք դրուած չոր լաւաշներն էր աշ-քով չափում Մանչուկը, անուշ հացերի հոտն ու տեսքը նրան խելքամաղ էր արել. քանի հաց ամէր նա, որ ոչ վարժուհու մօտ ամօթով մնար, ոչ մօրն ու քոյրերին քաղցած թողնէր: Մտածեց, մտածեց ու վրայ բերեց.

— Տասը հերիք է, տասը զըկիր:

— Ո՛չ, տասը քիչ է, ձերոնք շատուոր են, ասաց զողակաթը. այսօր դեռ տասն և հինգ ուղարկենք, յետոյ կտեսնենք:

— Լաւ, թող քո ասածը լինի, ուրախ-ուրախ ասաց Մանչուկն և առանց վարժուհու կամքը հարցնելու, ձայն տուեց ժամնարի հարսին, որ աւելը ձեռքին՝ տունը մաքրում էր:

— Զես հասկանում, աւելդ շպրտիր, յետոյ էլ կաւկաս, էղ վոազ չէ. սփոռոցը բեր, 15 կծկուծ, ձուաձեղի պէս կարմիր հաց դիր մէջը, տար մեր տունը:

Էլ յետ մեր Մանչուկի սիրտը տեղն ընկաւ, նրա

\*) Մեր աշխարհումը շատ տեղ հաց թխում են՝ ամիսը կամ երկու ամիսը, մինչեւ իսկ չորս ամիսը մի անգամ: Թոնքիցը գուրս գալուն պէս՝ գազաշափ սպիտակ լաւաշները փոռու են կապերաների ու մեզարների վրայ, չորացնում են և մէկ-մէկ գարսում են մեծ տաշախ մէջ, որ կախուած է առաստաղից: Ուտելու համար օրական իջեցնում են ինչքան պէտք է, բարակ ջուր են ցնցղկում և սփոռով ծածկում: Մի քանի բու-պէտք լաւաշը փափկում է թաւչի պէս:

ձայնը զլուեց, և նա սկսեց զանգակի պէս ծոր տալով երգել իր «բա, գա, դա-ն»:

Ե.

Հէնց որ դասը վերջացրեց մեր Մանչուկը՝ իս-կոյն տետրակները ժողովեց պայուսակի մէջ և մօ-տեցաւ զողակաթին:

Վարժուհին էլ իր կողմից մի անձեռոցիկ կա-պած՝ նորան էր սպասում:

— Գնում ենք, օրիորդ ջան:

— Գնում ենք, այս:

Էլ մտիկ շտուեց Մանչուկը և ուզում էր դուրս պըծնել:

— Կաց, այ Մանչուկ, հապա այս կապոցն ով պիտի վերցնէ:

— Այդ ինչ կապոց է:

— Հապա Ղումաշի համար պանիր շենք տանում:

— Վահ, էղքան պանիրը նրա փորը հօ կծակէ:

— Ուրեմն բաց արա. տես, եթէ շատ է կէսը յետ վերցնեմ:

Մանչուկը կապոցը յետ բաց արաւ, և աշքերը շլացան, ուրախութիւնից՝ տեղիցը կէս գազ ծլունգ եղաւ:

— Այս ինչ է, օրիորդ ջան, տանձ, խնձոր, սու-

ջուխ, ալանի, փշատ, քըքում էր նա մըգեղէնը՝  
ինչպէս հաւը քզզում է հողը, և զարմանում էր:

—Այսքանն ում համար է, օրիորդ:

—Զէ որ ասացի Ղումաշի համար:

—Ղումաշը կարող է էսքանն ուտել:

—Գնաս չունի, դու հետք կօգնես:

Վարժուհին դուրս հանեց կարասի տակից մի  
ուրիշ կապոց և ասաց.

—Սրանցից որն ուզում ես՝ դու վեր կալ, Ման-  
չուկ, միւսն էլ ես կվերցնեմ:

—Այդ ինչ է, օրիորդ ջան:

—Ոչինչ, պանիր է ու քիչ բրինձ ու ձաւար, մայ-  
րիկդ կեփէ, կուտացնէ:

—Ի՞նչ լաւ եղաւ, քանի ժամանակ է Ղումաշը  
տաք կերակուր չէ կերել. մայրիկիս կասեմ՝ փլաւ  
կեփէ, ասաց Մանչուկն և մի տեսակ տխրած՝ ձայ-  
նը ցածացնելով հարցրեց, կարծես ամաշում էր.

—Հապա իւզը.

—Իւզը ժամհարի հարսը տարաւ, դու շտեսար,  
պատասխանեց վարժուհին:

Էլ ոչինչ չխօսեց Մանչուկը. նա փառաւորուել  
էր, երջանկութիւնից ոտքը գետնին չէր առնում,  
սրտի հճուանքից՝ փաթաթուեց վարժուհուն և  
կրծքին սեղմեց. նա մոռացել էր առաջին զըսած  
կապոցները. Մի քանի ըսպէ մանկական թաթիկներն  
աւելի աւելի ամրանում էին զողակաթի պարանոցին,  
և երեխան համարձակուեց համբուրել վարժուհուն:

Ոչ պակաս յուզուեց իր կողմից և օրիորդը. նա  
գիրին առաւ որբիկին և հարազատ մօր նման համ-  
բոյրներ էր տալիս:

—Դէհ, Մանչուկ ջան, հերիք է, ասաց նա վեր-  
ջապէս. կապոցներից որը կուզես՝ վերցրու, առաջ  
ընկիր: Բայց կաց, ես մոռացել եմ, գրպանդ յետ  
բաց արա: Եւ նա լցնելով քերեղանի մէջ առաջուց  
պատրաստած մըգեղէնը Մանչուկի զրավանը՝ ասաց.  
—Այս յատուկ քո բաժինն է:

Մանչուկը ապշել ու շշկուել էր. անխօս շալակը  
ձգեց պաշարեղէնի կապոցն և առաջ անցաւ:

Վարժուհին մըգեղէնն առած՝ նորան հետևում էր:  
Գնում էր Մանչուկն և ճանապարհին զողակաթի  
հետ զրոյց անում.—Այսքան ուտելիք ու միրգ օրու-  
մըս շեմ տեսել . . . մայրիկս մէկ-մէկ անգամ, երբ  
որ գնում է հարեւանների գործին օգնելու՝ պատա-  
հում է, որ քիչ բան հետը բերում է, բայց այսքան  
շատ նա չէ բերած: Քանի հայրիկս չէր մեռել՝ մենք  
շատ բաներ էինք ունենում—պանիր, իւղ, միս,  
նոր-նոր շորեր, իսկ հիմի... բայց օրիորդ ջան,  
յանկարծ աշքը ձգեց վարժուհու ձեռքի կապոցին  
և ամեն բան մոռացած՝ դոչեց. Ղումաշը ոնց պի-  
տի ուրախանայ, երբ քո ձեռի կապոցը բանանք:

Չորն անց կացան մեր ճանապարհորդներն և  
հասան Մ. փոքրիկ գիւղը: Մի քանի անշուք լարմիթ-  
ներ էին, իրար կպած, նեղ-նեղ փողոցներով: Տա-  
նիքներից քերուած ձիւնը դիզուել էր փողոցներում:  
Գիւղացիք կտուրների վրայով էին երթևեկութիւն  
անում:

Վարժուհին ուզում էր զնալ արորուած ճանա-  
պարհով, բայց Մանչուկն առաջ ընկաւ, ծռուեց  
դէպի կալերը և մի նեղ ձիւնոտ շաւզով զնալով  
ասաց.

— Հետո արի, օրինքդ. ահա այն մենակ երեցողն է մեր տունը. գոյց արի, աւելացրեց նա, ոտներդ դիբ ոտնատեղերի մէջ, ձնումը չթագովիս, խոռ ու փոթ տեղեր շատ կան, վէր կընկնիս, ոտդ կցաւացնես . . . Եյս էլ քեզ մեր տունը, ուրախուրախ գոշեց Մանչուկը, մատով ցոյց տարով մի առանձին ընկած խրճիթ, առանց լուսամուտների:

Եւ մեր Մանչուկը կատարեալ տան գլխաւորի պէս՝ հպարտ-հպարտ մօտեցաւ ծածկուած գուանն ու ձեռքով ծեծեց. Կուտիկն էլ էր ուրախացել. նա կողկոնձաց ու պոշը խաղացնելով՝ մտիկ էր տալիս իր տիրոջ երեսին:

— Ո՞վ է, ձայն տուեց ներսից մայրը:

— Ես եմ, մայրիկ, օրիորդն էլ հետո է, պատախանեց դրսից Մանչուկը:

Դուռը բացուեց:

Մի մութ տնակ էր: Մի փոքրիկ երդիկ, կամ աւելի շուտ՝ ծակ, առաստաղի մէջտեղը բացուած՝ աղօտ լոյս էր թափանցում: Երդիկից փոքր ինչ հեռու դրուած էր քուբի, վրան հնմաշ մի կապերտ ծածկած:

Մանչուկի մեծ քոյրը, տասներեք տարեկան մի գեղեցիկ աղջիկ, հնոտիքը հագին՝ կանգնած էր քուբու վերի կողմը և թէշիկ (իլիկ) էր մանում: Քուբու տակին նստած էին մի քանի մանը աղջիկներ, որոնք տեսնելուն պէս՝ վեր թռան ու կանգնուացին: Քուբու միւս երեսին՝ անկիւնից անկիւն կապուած էր մի ճօճ, որի առաջին խաղում էր երեք տարեկան աղջիկ, — մի սիրունիկ ոսկեգանդու երեխայ, Մանչուկին շատ նման, ինչպէս մի

խնձոր՝ երկու կիս արած: Նա Ղումաշն էր, Մանչուկի սիրելի Ղումաշը: Ճօճը Ղումաշի անկողինն էր: Երեխան հէնց որ տեսաւ օտար կնոջ՝ շրթունքներն ուռցրեց ու լաց եղաւ. միւս երեխայքն էլ զլուխները քաշ արին, քուբու վերի կողմը շառուցին:

— Տան գլուխն եկաւ, կանչեց Արփիկը, Մանչուկից առաջ ծնուած աղջիկը:

Ամենքը վրթկացին:

— Զայնդ, ձայնդ, խելօք, անամօթներ, խստութեամբ հրամայեց քոյրերին Մանչուկը: Գիտես, օրիորդ ջան, սրանք տան գլուխ ինձ համար են ասում:

— Հապա տան գլուխ չես ինչ ես, ասաց ժըպտալով մայրը. զիտէս, օրինքդ, սա է միայն մեր տան յոյս ու ապաէնը, սա պիտի տան գլուխ գառնայ, մեր տան տէրը լինի, մեր քանդուած օշաղը չնացնի ու ծխի, իմ երեխանցը տէրութիւն-հէրութիւն անի:

Ղումաշը լացը կտըեց ու խէթ-խէթ նայում էր վարժուհուն: Միւս աղջիկներն էլ սիրտ առան, կամաց-կամաց մօտեցան. մէկը շորին էր ձեռք քսում, միւսը գլխի փաթաթանն էր պտղունցով զնում, երբորդն ուղղակի կարճ կտըած մազերն էր շօշափում:

Աշք պէտք էր, որ նայէր՝ երբ վարժուհին իր բերած կապոցը դրեց քուբու վրայ և կապը յետ բաց ալեց. ամենքն ուրախութիւնից շշկիւ մնացել էին.

— աղջի, տես, աղջի, փսփսում էին նրանք իրար մէջ ու չէին համարձակւում մօտենալ: Միայն Ղու-

մաշն էր, որ մօտ վագեց, թաթիկները մրգեղէնի  
մէջը թաղեց:

— էս ինձ, էս ինձ, ճղճում էր Ղումաշն և չպի-  
տէր ինչ վերցնէր, ինչ թողար. աշքածակութիւ-  
նով ուզում էր միանգամից բոլորին տէր դառնալ,  
բայց հազիւ մի խնձոր բռնեց ու շտապով բերանը  
տարաւ:

— էս էլ քեզ, մայրիկ, շպրտեց Մանշուկն իր կա-  
պոցը քուրսու վրայ և կռները բարձրացրած՝ թռչու-  
տում էր երգելով. — «քա, գա, դա, ջան, ջան, Ղու-  
մաշս փուփու (կերակուր) կուտի» . . . Այդ ժամա-  
նակն էր, որ չնիկն յանկարծ ընկաւ նրա ոտքի  
տակ. Մանշուկը գլխկոնձի արեց, քիթը տուեց սիւ-  
նաքարին, ամօթից կարմրատակեց, և խռովածի  
պէս՝ պոօշները վէր թողեց, գնաց Ղումաշի ճօճի  
տակին նստեց, գլուխը դէմ տուեց մօլ կրծքին  
ու ննջաց: Հէնց տեղն ու տեղն էլ քնեց:

## Զ.

Յուրաը քանի գնաց սաստկացաւ. ճռճռան սառ-  
նամանիք է անում. թքում ես՝ զետին չէ ընկնում.  
բուքը ձայնն աշխարհքովը մին է արել. քամին վըզ-  
զալով՝ դռներ է ջարդուում. տեղ-տեղ՝ փոթորիկը  
ձիւնի սարեր է դիզել. մի ուրիշ տեղից ձիւնը հէնց  
է սրբել, խոր փոսերը լցրել, որ զետնի սեր բա-  
ցուել է. տանից տուն զնալը վտանգաւոր է դար-

ձել. բուքը կարող է յանկարծ մարդի խեղդել կամ  
ձիւնի տակ թաղել:

Կարժուհու ուսումնարանում մնացել են մօտիկ  
հարեանների սակաւաթիւ որդիքը, հեռու կենող-  
ները չէին գալիս ուսումնարան: Ո՞նց գային, բոլորն  
աղքատ մարդկերանց որդիք, ոչ ոտքերին ունէին,  
ոչ հազին. ուզեն չուզեն՝ պիտի տանը, տաք գոմե-  
րի օդաներում կուշ գան, մինչկ եղանակը մի քիչ  
կակզի:

Հիմի դու արի, մեր Մանշուկի խեղճ մօր դրու-  
թիւնը հարցըսւ. այնքան երեխայքը գլխին կի-  
տած՝ զուռն երեսին մնացել է փակ. մինը չկայ,  
որ թին վերցնի, ձիւնը քերի, մի նեղ ոտնատեղ-  
չաւեղ ճղի, որ ողորմելի ալրին դուրս գայ տանից,  
հարեանների ոտքերն ընկնի, մի երկու աթար, կամ  
տարթ խնդրի, բերի, թոնիրը տաքացնի ու իր  
խմորակերներին քուրսու տակն անի, կարպետը  
գլխներին ծածկի: Խեղճը մի կով ունէր. հիմի այն  
միակ կովը, իր երեխէքանց բերանը թաց անողն  
այս տարի ստերջ (անծին) էր մնացել և հարեանի  
գոմումը կապած էր. մի փունչ խոտի կրճոն (անա-  
սունների կերածի աւելցուկը) չկար, որ առաջը  
դնէր, սատկելուց ագատէր, մի տեսակ գարունքը  
հանէր: Կովը գլուխը քարը. Սահամը տաշտ ու  
մաղն օճորքիցն էր կապել. մի կտոր հաց չկար,  
որ երեխէքանցը սովամահ լինելուց ազատէր: Ան-  
բախտ ալրին օրերով զաւակները չորս կողմն էր  
հաւաքում և անհաց նստում: Փոքրիկներին աշխա-  
տում էր քներակները քերելով կամ գլուխներն իր  
ծնկանը տաքացնելով՝ նղղացնել, քնացնել, իսկ

մեծերի վրայ գոռում էր ու սաստում, որ սուս  
կենան։ Դարձեալ վարժուհին էր, որ զիւղի հա-  
րուստներից քիչ ու շատ ապրուստ ճարում էր և  
ուղարկում նորանց. բայց ճարածն ինչ պիտի լինէր,  
կամ մինչև երբ նա ուրիշների երեսը վէր բերէր,  
խնդրելով ձանձրացնէր։ իսկ Մանշուկը ցուրտ ու  
սառնամանիք չէր հարցնում, մի օր դասից յետ  
չէր մասում։ Վարժուհին նրա համար մի բամբակած  
արխալուղ էր կարել հասարակ շթից, մի զոյդ պաճիճ  
դուլպայ ու տրեխներ էլ զիւղի հարուստներից էր  
խնդրել։ Էլ Մանշուկը ցրտից ընչի պիտի վախե-  
նար, մանաւանդ որ բարեսիրտ Շողակաթը ստա-  
տիկ բուք կամ ցուրտ եղած ժամանակ՝ գիշերները  
նրան չէր թողում տուն գնալ, իր մօտ էր պահում։  
Տաք սենեակ, Շողակաթի նման խնամակալ. ուրիշ  
ինչ կուգէր։

Երբեմն երբեմն թէյի և ճաշի ժամանակ՝ վար-  
ժուհին սիրում էր Մանշուկի հետ կատակներ անել  
և երեխային խօսեցնել։ Թող հիմա բուքը որքան  
կամենայ՝ փշի, Մանշուկի հատ մազը չի կարող  
թեքիլ։

Հեշտաեռը վերջացնում էին, վարժուհին լտմ-  
պան դնում էր սեղանի վրայ և իր համար կարդում։  
Իսկ Մանշուկը նստում էր նրա դիմացը և քարէ-  
տախտակի վրայ, լեզուն կախ կցած, տառեր գրում։  
Կուտիկն էլ այստեղ էր։ Պառկում էր նա բուխա-  
րու կողքին, կամաց խռոմփացնում էր ու երազում  
մոռում, ճրում, կամ կողկոնձում էր, երեի երա-  
զում գայլեր էր տեսնում։ Բայց Մանշուկի խելք ու  
միտքն իր տառերի հետ էր, Կուտիկը մտքիցը թուել

էր։ Մէկ տեսնես՝ հեռացնում էր նա իրանից քարէ-  
տախտակին ու սկսում ժպտալով՝ գծածներին նայ-  
ել։ ինչ սիրուն են, ինչ լաւ են դրուած. վնասն ինչ,  
թէ ա ի ատամները մի քիչ վարազի ժանիքի նման  
ծուռ ծուռ են եկել. շատ հարկաւոր է, թէ ն տա-  
ռը շան նման պպըզել է։ Բայց Մանշուկը չի թող-  
նի, որ իր գրած տառերը պակասութիւն ունենան.  
Նա սկսում էր տառերի հետ բարձր ձայնով խօսե-  
լով՝ մէկ-մէկ ուղղել։

—Կաց, կաց, խզսզացնում էր քարէտախտակի  
վրայ քարէգրչով Մանշուկը. գու էղ ընչի ես գունչդ  
ցցել ու բերանդ բաց արել, ամօթ չի, հէնց հիմի  
ես քո ուեխը կը փակեմ . . . չը՛, կերա՞ր, լաւ էր . . .  
իսկ սա ընչի է պոշը կոացըել իմ Կուտիկի պոչի  
պէս. այ գու խորամանկ սատանայ, իսկոյն ես քո  
գլխին կշաքչեմ (մուրճով զարկել) . . . հը՛, տեսա՞ր . . .  
Նա շաքչում էր անհնազանդ տառին ու դառ-  
նում տիրուհուն.

—Ո՞նց է ո՞նց, օրիորդ ջան, լաւ է, թէ ոչ։  
—Լաւ է, պատախանում էր վարժուհին և նո-  
րից գրքի մէջ թաղկում, իսկ Մանշուկը դարձեալ իր  
քարէգրիչն էր ճոճուացնում։

Երբ որ Մանշուկը զբելուց յողնում էր և քարէ-  
տախտակը շպրտում՝ վարժուհին նրա համար ման-  
կական զրքեր էր կարդում, կամ զանազան հետա-  
քրքիր առակներ էր ասում, պատմութիւններ էր  
անում։

Մանշուկը զազանների պատմութիւններ շատ էր  
սիրում և ծիծաղից թուլանում էր՝ երբ վարժուհին  
արջի ու տանձի, խորամանդ աղուէսի ու դմրոճիկ

գիրացած հաւի, վախկոտ նապաստակի ու քաղցած գայլի պատմութիւններն էր անում: Այնպիսի առակներ կային, որ քսան անգամ էլ պատմէիր՝ քսան անգամ էլ ուրախութիւնով ականջը կախած կլսէր մեր Մանչուկը:

—Մէկ էլ պատմիր, օրիորդ ջան, թէ ինչպէս աղուէսը գայլի պոշը սառցին կապեց. ինչ զալում սատանան է աղուէսը. հապա գայլը, էն յիմար գայլը: Ջատ հարկաւոր է, թէ ինքը մեծ է. դէ որ զլսին խելք չկայ: Դէ, դէ, հոգուդ մատաղ, օրիորդ ջան, թէ իմ արևը կսիրես՝ պատմիր, չէ որ քո Մանչուկն եմ:

—Քեզ շատ եմ սիրում, Մանչուկս, բայց հերիք է, տամն անգամ եմ պատմել, հիմի հերթը քոնն է, դու պատմիր:

—Կաց . . . ինչ պատմեմ . . . Մանչուկը մատը ճակատին էր դնում մեծ մարդի պէս ու մտածում: Համբերիր, իսկոյն կպատմեմ . . . եղել է չփ եղել՝ մի ծուռը դդում . . . էդ ծուռը դդումը գովթգովթալով զլորում է . . . ը՝ ը՝ ը՝ . . . Վանչուկը մտածում էր, մտածում ու ձեռքը տանում ծործորակը քերում:

—Յետոյ, հարցնում էր զողակաթը, յետոյ ինչ եղաւ ծուռը դդումը:

—Ոչինչ, պրծանք գնաց:

—Վարժուհին փառ-փառ էր անում, ծիծաղում, և Մանչուկն ուրախանում էր, որ կարողացաւ իր բարերարի սիրտը շահել:

Ջատ յաճախ պատմում էր Մանչուկը վարժուհուն իր մասին, իրանց ընտանիքի մասին և տըխրում: Անցեալի զառն յիշողութիւնները նրա սիրտը միշտ կոտրում էին և աշրելն արտասունքով լցնում.

բայց զողակաթը միջոց չէր տալիս, որ Մանչուկը մտմտուքների մէջ ընկնի:

—Ոչինչ, Մանչուկս, ասում էր վարժուհին, ձեռքերն երեխայի մազերին քսելով. կմեծանաս կմոռանաս:

—Մէկ մեծանամ՝ ես գիտեմ, տես ո՞նց տանտէր եմ զառնում, քանի կով, քանի եղը, ինչքան գլուխ ոշխար եմ առնում. մենք հիմի ութ հոգի ենք, ու մի ստերջ կով, ծնի էլ ո՞ր մէկին փորը պէտք է կշացնի: Հա, զու մեր կովը տեսալ:

—Ո՛չ, չտեսայ:

—Այ, մէկ էլ որ կգաս մեր տունը՝ քեզ ցոյց կտամ. անունը Ճամամ է, վրան շամամի պէս կարմիր ու սպիտակ խալեր կան, դրա համար Ճամամ ենք ասում: Ես մեր Ճամամին չեմ ծեծում, մեղք է, ափոս է, լաւ կով է, ծնած ժամանակն երկու կովկիթ լիքը փիսփիսալով կաթն է տալիս:

—Ծեծելլ լաւ բան չէ, Մանչուկս. կով է եղել, մարդ, թէ ուրիշ անասուն՝ չպիտի ծեծել:

—Ես էլ չեմ ծեծել: Մայրիկս ասում է, որ հայրիկս շատ լաւ սրտի տէր մարդ էր. նա չէր ծեծում. ես էլ որ մեծանամ՝ հօրս պէս բարեսիրտ կլինիմ. մի տուն կշինեմ, մեծ-մեծ լուսամուտներ կթողնեմ, որ լոյս լինի, այ, ոնց որ մեր ուսումնարանն է: Յետոյ մեր տնեցոց համար նոր-նոր շորեր կառնեմ, մայրիկիս համար խաս մինթանցու կառնեմ, քոյրերիս համար ալ չթից շորեր կանեմ, Ղումաշի համար հնդու խուրմա ու մի ջուխտ կարմիր ծուղէք կառնեմ: Քեզ համար էլ մի լաւ ընծայ կրերեմ՝ ինչ որ քո սիրտը կուզի:

— Ել ապրիս, Մանչուկ շան, որ ինձ էլ չմոռացար:

— Ո՞նց թէ մոռանամ. դու շգիտես, որ ես քեզ շատ եմ սիրում: Երբոք ես կմեծանամ ու տուն կշինեմ՝ դու արի մեզ մօտ կաց: Հա . . .

Ամբողջ գիշերներն այսպիսի զրոյցներ էին անում վարժուհին ու Մանչուկը: Ընթրիքից յետոյ՝ սովորաբար երեխայի աշքերը ծանրանում էին. ննջում էր նա ու գլուխը դնում էր սեղանի ափին և քնում: Կուտիկն էլ նրա ոտի տակին էր խոմփում:

Վարժուհին վերցնում էր քնակորոլ Մանչուկին և տեղաշօրի մէջ պաուկացնում. Կուտիկն էլ նրա ոտքերի տակին պահապան էր կենում, որ իր տէրը միայն շմայ: Մինչև լոյս՝ Կուտիկի աշքերը չէին փակում: Գիշերը մի քանի անգամ վարժուհին դուրս էր գալիս, երեխայի վրայ հսկում, որ շինի թէ բացուած լինի: Նա Կուտիկին գտնում էր միշտ աշքերը բաց: Վարժուհու ներս գալուն պէս՝ Կուտիկը վեր էր կենում Մանչուկի ոտի տակից, պոշը խաղացնելով դիմաւորում էր նորան: Երեկի, ուզում էր հասկացնել, թէ ինձ ուրիշ ապերախտ ու քնոտ շներից շկարծես:

## Ե.

Համար էլ լաւ էր ուսումնարանը, շատ էլ տաք էր այնտեղ, շատ էլ Մանչուկի փոքը միշտ կուշտ էր,

և վարժուհին լաւ-լաւ հետաքրքիր առակներ էր ասում. բայց երբոք բքի պատճառով մի քանի օր Մանչուկը տուն չէր գնում ու տնեցիք միտքն էին գալիս՝ նա սկսում էր արտմել ու տիրել: Հատ անգամ քարէտախտակի վրայ զրելու ժամանակ, յանկարծ քարէզրիշը ձեռքից շպրտում էր նա, զլուխը վեր քաշում և դրսկը զգվացող քամու ձայնին ականջ դնում: Այդպիսի ժամանակ խոր յոդոց էր քաշում նա և աշքերը տնկում, ճրագին նայում:

— Էլ ինչ մտքիդ յետեկիցն ընկար, Մանչուկս, հարցնում էր Զողակաթը:

— Տեսնես հիմի մերոնք ինչ են անում, պատասխանում էր Մանչուկը. ով զիտէ, ոնց են ցրտի ձեռնից սրթսրթում ու վրթվրթում, ոնց են առանց ինձ փախում:

— Ընչից պիտի վախենան:

— Ո՞նց թէ ընչից, հապա թէ որ գայլ գայ:

Գայլը տուն չի կարող մտնել, դուռը փակուած է:

— Թէ որ կողեր գան:

— Գոզս որտեղ է. Երբ ես լսել, որ այս կողմերը գողեր գան:

— Ինչ կուզէ թող լինի, իմ էնտեղ լինելը նրանց համար յոյս է և ուրախութիւն. դէ, թէկուզ պստիկ եմ՝ բայց տան գլուխ եմ, տղամարդ եմ:

— Տղամարդիս մտիկ տուէք, ծիծաղելով ասում էր վարժուհին. Կուզես՝ արի տղամարդութիւնդ փորձենք. կարձող ես հետս կող բռնել, տեսնենք ո՞րս կը յաղթենք: Բոնում էր Մանչուկին օրիորդը և բարձրացնում վերև, քիչ էր մնում գլուխն առաստաղին

դիպշէր: Կուտիկը հէնց որ քնաթաթախ աչքերը բաց էր անում՝ կարծում էր, թէ իր տիլոջը նեղացնում են, սկսում էր մոռալ ու հաջալ:

Բայց այս հանաքնները չէին կարողանում Մանչուկի սիրտը բաց անել, ուրախացնել: Հէնց որ վարժուհին նրան ցած էր զնում՝ նա նստում էր Կուտիկի կողքին, վաթաթուում էր նրա բրդոտ վզովը ու կամաց հետն ասուլիս անում:

— Կուտիկ, այ Կուտիկ, տուն գնալ շեն ուզում. Էնպէս չէ, որ մեր տունն էստեղից լաւ է: Հիմի ով գիտէ, մայրիկս ճախարակի տակին է նստած: Հեղնարը սանտերքն առաջը դրած՝ բուրդ է զզում, Արփիկը Նումաշի ճօճն է օրօրում... Իսկ խեղճ ձամամի տեղն ասենք մեր հարևան Դարբնենց գոմումը տաք կլինի, բայց արդեօք փորին խոտ-մոտ կպել է, թէ քաղցածութիւնից բառանչում է: Կուտիկ, այ Կուտիկ, վայ թէ մերոնք էսօր նշխարք շեն գտել բերանները զնելու, քաղցած փորով պիտի քնեն. մայրիկս էլ հիմի տխուր տըտում նստել է ու ինքն իրան ասում.— տեսնես ինչ է անում մեր տղամարդ Վահանը...

Մանչուկի աչքերը լցում էին: Նրա Կուտիկն էլ զգալով, որ իր տէրը տխուր է՝ վնպատում էր ու նրա երեսը լպատում:

— Մեր տանիցը ձանձրացել ես, հա, Մանչուկ, հարցնում էր վարժուհին, լսելով նրա ասուլիսը:

Օրիորդի սիրտը շպակասեցնելու համար՝ Մանչուկն աչքերը ցած էր թողնում և պատասխանում.

— Ես, ոռհչ, ընչի պիտի նեղանամ, ինչս է պակաս. բանը մայրիկս է, որ շատ կլինի նեղանում:

— Ի՞նչ կայ, էգուց լոյսը կբացուի, դասդ կառնես ու կերթաս կտեսնես, աշխատում էր հանգստացնել վարժուհին:

Հողակաթի խօսքերն արդարե ուրախացնում էին Մանչուկին:

Միւս օրը՝ դասի վերջին գրքերը կռնատակն էր զնում, մի կապբցով ուտելիք էլ վարժուհուցն էր ստահում և ուրախ ու զուարթ շտապում էր իրանց տունը:

Հետևեալ առաւօտը՝ ծէգելահան դուրս էր զալիս իրանց տանից և գալիս վարժուհուն իրանց ընտանիքից նոր-նոր համբաւներ պատմում. Էս ինչ է, զայլն եկել, մեր հարևանի հորթը տարել է. Ղումաշը քանի անգամ է իր թշերը պաշել. Զամամ կովը լիզել է իր ձեռները... Եւ սկսում էին նորից նախկին մանրամասնութիւնները:

Ը.

Մի անգամ վարժուհին խմորի էր, հաց էին թխում. Եռաւօտուանից Մանչուկի սիրտը կախ էր, նա ուզում էր տուն գնալ:

Ճաշի որ նստեցին ու փափուկ թարմ լաւաշները չորս տակ ծալուցցին, սեղանի վրայ շարուեցին՝ Մանչուկը սրտապնդուեց ու հարցրեց.

— Օրիորդ ջան, մայրիկս համար թափա (թարմ) հաց պիտի տաս, որ տանեմ:

— Հաւ, հացդ կեր ու տաք, ասաց զողակաթը:  
ձաշից յետոյ յանկարծ ձիւնն սկսեց բրդել, ինչպէս  
է թափում քուլա քուլա. հէնց իմանաս՝ թեաւոր-  
ուած մորեխ լինի, երկնքի երեսը բռնած։ Աշխարհ-  
քը մթնեց, կարծես ժանգառն է կոխել։

Այս, Մանչուկս, մէկ լուսամտից նայիր, տես.  
ոնց պիտի գնաս այս եղանակին։

Մանչուկը խիստ տիսրեց. որ դանակ տայիր՝ ա-  
րիւն չէր կաթի. նա արդէն մտքումը մի ըռպէտ  
ուազ ուրախութիւնից վեր-վեր էր թոշում և իր անե-  
լիքն էր շափ ու ձկ անում. թաժա հացերը սփոռ-  
ցի մէջ դրած՝ շալակս կկապեմ, կտանեմ մայրիկիս  
առաջին քուրսու վրայ կփռեմ. մայրիկս մի մեծ-  
կտոր երեխէքանցը կրաժանի։ Դումաշը մի ամբողջ  
լաւաշ շորս տակ կծալի ու մի ծայրից կծելով՝ կգայ  
իր գիրկը կընկնի, թուշը դէմ կանի որ ինքը պա-  
շի . . . և յանկարծ էսպէս քաղցը երազներից յետոյ՝  
արի ու յետ մնա՝ թէ եղանակը փշացել է . . . իսկ  
թարմ հացի անոյշ հոտը թաղը բոլոր բռնել էր . . .  
տաք տաք ինչ համեղ են . . .

— 2է, օրիորդ ջան, ես կերթամ, հաստատ, բայց  
խղճալի դէմքով ասաց Մանչուկը. խամ հօ չեմ. ճա-  
նապարհ հաց ու պանիրի պէս գիտեմ։ —

Վարժուհին միանգամայն մտաղիք չէր նըան  
թողնելու. բայց Մանչուկը թերթեանքների տակից  
այնպիսի քաղցը նայուածք ձգեց նըա երեսին և  
այնպէս աղաշ-պաղատ անելով խնդրեց, որ զողա-  
կաթը չկարաց դիմագրել. չինդ հատ լաւաշ հաց  
փաթաթեց սփոռցի մէջ, կապեց Մանչուկի շալա-  
կը և ճանապարհ դրեց։ Կուտիկն ընկաւ տիրոջ ա-

ռաջն, ու երկուսը միասին գլոր-մլոր գալով՝ աշքից  
աներեւութացան։

Ճանապարհ դրեց վարժուհին Մանչուկին և սկսեց  
հացերի յետեւից կենալ, բայց քանի լաւաշները շու-  
ռէ շուռ էր տալիս, որ չորանային ու ժողովէր՝ Ման-  
չուկն էր աշքի առաջը գալիս։ Սենեակի դուռը բաց  
էր անում նա շուտ-շուտ, դուրս էր մտիկ տալիս և  
նորից ծածկում էր։ Արդէն բոլորովին բուք էր։ Եր-  
կինք ու զետինք իրաը էին խառնուել. ճանապարհ-  
ները ձիւնով լցուել, միացել էին, ոտնատեղ չէր երե-  
ում. բքի վզվզոցի միջից շարունակ լսում էր եկե-  
ղեցու գլխից զանգակների տիսուր զօղանչինը։  
Ժամհարն շտապել էր զանգակները տալ, որ Ըստուած  
խղճար ու բուքը դադարեցնէր, և զաշտ ու չօլերում  
բքարգել ընկած ճանապարհորդները շմոլորուէին,  
դիւղի ճանապարհ չկորցնէին։

Վերջապէս բոլորովին մութը զետինն առաւ։

— Այս, ինչի թոյլ տուի որ գնար, անհանդիստ  
սրտով մտածում էր վարժուհին։ Ժամանակ էլ շու-  
նէի, թէ ինքս հետը գնայի. մի մատն երեխան  
ինչպէս պիտի այս եղանակին տեղ հասնի։

2ը համբերեց զողոկաթը. նա տաք հազնուեց և  
դուրս եկաւ փողոց։ Ոտքը շեմքից հագիւ էր դուրս  
դրել՝ որ աշք ու յօնք, քիթ ու բերան ձիւնով ծած-  
կուեցին, քիչ մնաց քամին իրան ձիւնի մէջ թա-  
ղէր։ Միայնակ անկարելի էր գնալը։ Նորից տուն  
մտաւ և ծնկները ծեծում էր։ Մտածեց նա և զնաց  
տէրտէրենց տունը։

— Հը, ինչ կայ, օրիորդ, այս ժամանակ, հարցըց  
նա զողակաթին։

Մի ըոպէ լուռւթիւնից յետոյ՝ վարժուհին ստիպուեց ամեն ինչ մանրամասնօրէն պատմել քահանային:

—Ուրեմն նստելու ժամանակ չէ. լապտերը վառնք ու դնանք, տնօրինեց տէրտէրը:

Լապտերը վառ, մի-մի փայտ ձեռներին՝ նրանք ճանապարհ ընկան:

Գիւղից հազիւ դուրս էին եկել և իշնում էին ձորը՝ որ փոթորիկը լապտերը հանգցրեց, և նրանք մնացին մութն, ականակիր խաւարի մէջ: Զիւնը շարունակ բրդում էր: Ժամհարը զանգակները ջարդում էր: Տէրտէրն առաջ ընկաւ, փայտը սիւն տալով, վարժուհին նրա յետեկից խարխափելով քայլում էր: Ինչ դժուարութեամբ ոտք են փոխում նրանք. Աստուծոյ յուսով, մինչև ծնկները ձիւնի մէջ խրուելով մի տեսակ նրանք ձորը դուրս եկան:

Փոքրիկ գիւղի մանր պատուհաններից մի քանի աղօտ ճրագներ երեսում էին:

Վերջապէս, որպէս և իցէ, հասան նրանք Մանշուկենց տունը և դուռը թակեցին:

Տանտիկինը դուռը բացեց և մնաց շփոթուած:

—Իսկ Մանշուկն ուր է, աշքերը քունչ ու պուճախ ածելով հարցընեց զողակաթը:

—Մանշուկը, սփրթնած կակազեց տանտիկինը. երեխէս երեկ ուսումնարան եկաւ և տուն չէ յետ դառել:

Վարժուհու ծնկները ծալուեցին. նա նստեց քուրսու վրայ և սառած մնաց, ամբողջ մարմնով դողում էր: Տէրտէրը փայտի վրայ թիկնել էր և խօսք չէր գտնում որ ասէր: Մանշուկի մայրը մտիկ տուեց

նրանց երեսին և մեռելի գոյն ստացաւ: Թշուառ մայրն ամեն բան հասկացաւ. նրա ոտքերը դող ընկան. տատաննուեց, տարութերուեց, զլուխը սիւնին դէմ տուեց և սկսեց գոռալ ու գոչել:

Քուրսու չորս բոլորքը կտրած երեխակը վեր թռան տեղերից և նոյնպէս ճոցը դրին:

Հազիւ հազ տէրտէրն ուշը զլուխը հաւաքեց:

—Սպասելու ժամանակ չէ, գոչեց քահանան. պէտք է սրանց հարսաններին իմաց տալ.... մարդիկ ժողովել...:

Տէրտէրի հետ միասին խելագարի նման դուրս ընկաւ Մանշուկի մայրն և ամեն դուռ բաղխեց: Ոչ ոք դեռ քնած չէր: Հատ շքաշեց, ողջ զիւղը հաւաքուեց Մանշուկինց տունը: Ախ ու վախը դըն էին, ցաւում էին, ափսոսում էին Մանշուկի համար:

Անբախտ մայրը ոչ մի մսիթարանք լսել չէր կամննում, սրա նրա մօտ էր վազում և ոտք ու ձեռներն ընկնում. ×

—Ձեզ դուրբան, ձեր որդոց արեին դուրբան, խղճացէք, ձեր գառնուկների զլխովը պտոյտ տուէք մի տուն լիքը որբերին. պտոտեցէք, զտէք իմ Վահանին, իմ տան զլխաւորին:

—Այո, օրհնեալ լինիք, սիրելի ժողովնւրդ, շտապենք, դիմումն էր անում քահանան:

—Ախար կարգիդ մեռնիմ, տէր հայր, ասաց զիւղացիներից մէկը, ինչ անենք, զլուխներս ո՞ր քարովը տանք. տեսնում ես բուքը ոնց է շվշացնում. մթութիւնից մատղ կոխսն մարդի աշք՝ չի իմանայ... երեկի խեղճ երեխին քամին շպրտել է ձորը, անպատճառ կամ փշուր-փշուր է եղել, կամ մի փոսում ըն-

կած՝ սառել ցրտատար է եղել. գարունքը, ձիւնն  
հրբոր կհալշի՝ մի տեղից ձիւնի տակից կերևայ:  
խեղճի ճակատին էլ այն է զրուած եղել. ամենից  
լաւն է՝ հինգ հիմի մի «Հոգուց» ասես, խեղճ մօրը  
մխիթարենք ու վնանք մեր տները:

Վարժուհին շունչը չէ կարողանում բռնել, այն-  
պէս էր հեծկլտում ու լալիս, իսկ թշուառ մայրը  
թթվակալով դիպաւ գետնովն ու անշնչացաւ:

Հարեան կանայքը ճակատն ու կուրծքը ձիւն  
քսելով և ծծումբ ծուխ տալով՝ աշխատում էին ուշ-  
քի բերել, իսկ զիւղացիք ու տէրտէրը ձեռքերը  
խաչած, գլուխները կախած՝ լռել էին և կան-  
գնել:

— Ափսոս մեր Մանչուկ, ինչպէս անմահ, անգրող  
կորաւ, մահացաւ . . . այս բքին՝ մեծերն էլ չեն դի-  
մանայ, քչփշում էին իրար մէջ սա ու նա:

Յանկարծ, ձիւնի մէջ կոլորուած, շունչը կտրած,  
ներս ընկաւ Մանչուկենց հարեանի 14 տարեկան  
տղան և ասաց.

— Կալերումը մի շուն էնպէս վնդստում է, որ  
լսողի սիրտը կտրատւում է:

— Ի՞նչ շուն, ինչ ես գլխիցդ դուրս տալիս, ասա-  
ցին այս ու այն կողմից. էսպէս ժամանակ կալերու-  
մը շունն ինչ գործ ունի:

— Աստուած վկայ, տէրտէրի կարգն ինձ խոռվ  
կենայ թէ սուտ եմ ասում. շատ վաղուց էր՝ լսում  
էի. կարծեցի թէ գայլէ . . . գայլի ձայն չէր. շուն  
է անպատճառ. կուզէք՝ դուրս եկէք ականջ դրէք,  
քամին որ կալերի կողմից փշում է՝ շան ոռնոցը  
պարզ լսում է . . .

— Սիրելիք, գնանք տեսնենք, ասաց տէրտէրը.  
Աստուծոյ ձեռին անկարելի բան չկայ:

— Կացէք, կացէք, կուտիկը հօ չէ, գոչեց նըանց  
միջից մինը. շատ կարելի է կուտիկն է. Մանչուկն  
առանց կուտիկի մի ըռպէ չէր մնում:

— Կուտիկն է որ կայ, վեր թռչելով ասաց վար-  
ժուհին. դնանք, տէրտէր, գնանք, պարոններ . . . ի  
սէր Աստուծոյ . . . ես ինքս եմ կուտիկին Մանչու-  
կիս հետ ճանապարհ զրել:

Բոլորը միասին դուրս թափուեցին, որը լապ-  
տեր բռնեց, որը՝ թիակ, որը՝ բահ: Իսկ փոթորի-  
կը շարունակ փշում էր: Զիւնը մարդ էր կուրացնում,  
չէր թողնում աշք բանալու. քամու ձայնից խօսք չէր  
լսում, զանգակն էլ անդադար զնզգնում էր— զընդ  
զընդ: Բոլորը կանգնոտել էին բաց երկնքի տակ  
ու ականջները սրել:

— Ոչ մի ձայն, ոչ մի շնչոց . . .

— Այ Ղեօ, չէ շուն էր ոռնում, հապա ուր է,  
հարց են տալիս համբաւաբեր տղային:

— Էն սուրբ Գէորգի զօրութիւնը՝ որ ոռնում էր,  
երդուեց Ղեօնդը, գլուխը շորեք կողմը դարձնելով:  
Մի քիչ կացէք . . . լսեցէք . . . լսեցէք, հըրը . . .

Ամենքը ջուր մազուեցին. սուտ չէր Ղեօնդի խօս-  
քը. քամու շուոցի միջից կալերի կողմից՝ մի սրտա-  
ճմլիկ, տխուր ոռնոց երկար ծոր տալով հասնում  
էր ամենքի ականջին . . .

— Սիրելի ժողովուրդ, գնանք, առաջ ընկաւ քա-  
հանան, գնանք: Նա ուղղուեց կալերի կողմը, որ  
տեղից լսում էր շան կողկոնձալից ոռնոցը: Վար-  
ժուհին թէպէտ ճռներում էլ ոյժ շունէր՝ արտա-

սունք թափելով՝ ընկաւ տէրտէրի յետեն ու մոռանալով որ կրկնակօշիկները վաղուց թաղուել էին ձիւնի մէջ ու մասցել՝ հետեւում էր քահամսային:

Ճատ ասացին, շատ խորհուրդ տուին գիւղացիք, որ վարժուհին չգնար, մնար Մանշուկենց տանը, բայց ոչ նա լսեց, ոչ տէրտէրը հակառակեց:

Բաւական ժամանակ զնում էր բազմութիւնը. որի ոտքն էր ձիւնում թաղուամ, երբեմն մէկն էր վայր ընկնում, ժամանակ-ժամանակ քամին լապտերներից մէկն ու մէկն էր հանգնում: Մին լսում էիր, որ ոռնոցի ձայնը շատ մօտիկից է գալիս, երբեմն քամու բերանն երբ շուռ էր անցնում՝ ձայնը կորչում, անհետանում էր. այդ ժամանակ ամենքը ստիպուած կանգնում էին ու ականջները շորս շինում:

Եւ ահա մինումը մի ահագին սարի պէս բան առաջներին ցցուեց . . . խոտի դէզ էր, որ թողել էին դաշտում մինչև գարուն . . . ոռնոցը, հինգ իմանաս, երկու քայլից էր լսում:

— Սուտ չէ, այ էլլիկ (համայնք), կուտիկի ձայնն է. կուտիկն է, ասաց ուրախ-ուրախ գիւղացիներից մէկը . . . կացէք . . . լսեցէք . . .

Ամենքը մասցին կանգնուած: Մի րոպէ քամին դադար առաւ. լսում էր միայն մարդկանց շնչառութիւնն ու հոռցը . . .

Ահա դարձեալ բարձրացաւ շան սուր և աղալի կողկոնձոցը . . .

— Կուտիկ, կուտիկ, կուտիկ, կանչեց վարժուհին: Ոռնոցը դադարեց. դէզի տակից մի սև ստուեր կողկոնձալով մօտեցաւ բազմութեանը:

Կուտիկն էր—փոշոտ ու բրդոտ կուտիկը. սրա

նրա մօտ է վազում շնիկը. վնգստում է, թռչկոտում է առաջներին, ձեռներն է լիզում և նորից յետ է զնում դէզի տակը:

Դէզի շորս կողմը բռնեցին գիւղացիք և ձիւնը քըքըեցին:

— Ահա, էստեղ է, գտայ, ձայն տուեց Ղեղնդը, սուտ էի ասում:

Ամենքը մօտ վազեցին և թիերով ու բահերով յետ տուին թմբի նման բարձրացած ձիւնը, որ բուքը լցըել էր Մանշուկի գլխին: Կուտիկն էլ կողկոնձալով ու վնգստալով, դնշով ու թաթիկներով ձիւնը յետ էր տալիս և մարդկանցն օգնում:

Վերջապէս Մանշուկին հանեցին ձիւնի տակից: Խեղճ երեխան մէչքը տուել էր դէզին, կուցումած ձեռքերը խաչել էր և թմբել, մնացել. շէր իմացւում քնած էր թէ մեռած:

Վեր կալան և փատացած տուն բերին:

Մայըը շեմքը կտրած՝ սպասում էր. նա երբոր տեսաւ ցրտատար որդուն՝ ճշաց ու մօտ վազեց:

— Սպասիր, տնօրինեց ամենից ծերունի և յարգելի գիւղացին. պէտք է ողջ մարմինը ձիւնով տրորել . . . կարելի է, շունչ կայ մէջը: Դէհ, տղէք, տըկլորացըէք . . .

Մանշուկին պառկացըին խոտի վրայ, մերկացըին ու սկսեցին ձիւնով տրորել: Ամենքից աւելի աշխատում էր Ղեղնդը. նա թէկ ջահէլ էր, բայց յաղթանդամ տղայ էր. քրտինքն առու էր եղել ճակատից և վէր թափւում պճեղներից:

Յանկարծ կանգնեց Ղեղնդը. Ժպտալով շորեք կողմը նայեց և գոշեց.

— Յետ է գալիս, մարմինը տաքացաւ, մատներն էլ ծալում են: Բոլորը շրջապատել են Մանչուկին, մայրը մի կողմը կանգնած՝ լալիս էր:

Տէրտէրն ու վարժուհին նոյնպէս ուրախութիւնից լալիս էին:

— Ի՞նչ ես կանզնել բուի նման բռում, դարձաւ գիւղացիներից մէկը մօրը. վերմակ կունենաս, ինչ կունենաս, մի տաք բան բեր ծածկենք:

Մայրը միակ հնոտի վերմակը վեր քաշեց մանը աղջիկների վրայից և մօտ բերեց: Տկլոր-տկլոր երեխայքը, մէտակ պատուտուած շապկով, շարուեցին իրանց տան գլխի շորս բոլորտիքը և զոսիւն զոշիւնը դըին: Բայց խեղճերին քշեցին և կոխեցին կափերտի տակը:

Մանչուկն սկսեց շունչքաշել . . . մէկ . . . երկու . . . երեք անգամ:

Կուտիկը վրայ վագեց իր տիրոջն և սկսեց կողկոնձալով լպստել նրա մարմինը: Վարժուհին հերթով փաթաթւում էր մէկ Մանչուկին, մէկ կուտիկին . . . կուտիկ, կուտիկ, իմ սիրուն ու նախշուն կուտիկ . . . Գիւղացիք իրանք էլ էին սրտաշարժուել. նրանք թեերով ու վէշերով սրբում էին աշքերն ու քթերը:

Իօկ մեր Մանչուկը մի անգամ էլ խոր շունչքաշեց և բաց արեց իր մեծ-մեծ ու խարտեաշ վառվուն աշքերը, որ մազ մնաց՝ պիտի յաւիտեանս փակուէին: Նա զարմացած ու շնկուած՝ նայում էր իր շուրջը և չէր հասկանում, թէ ուր է ինքը և ինչ է կատարում այնտեղ:

Ցանկարծ Մանչուկը տեսաւ մօրն ու ժպտաց,

ուզեցաւ տեղիցը կանգնել, բայց ձայնը հազիւ փոքրէցը հանելով ասաց.

— Մայրիկ ջնն, լաց մի լինիր. . . քեզ համար... թաժա... լաւաշ....

Եթէ, իմ գառնուկ կարդացողներս, աղջիկ էք թէ տղայ՝ միմնոյն է, կուզէք իմանալ, թէ ինչ եղաւ վերջը Մանչուկը՝ ես ձեզ կարող եմ պատմել:

Մանչուկը հիմի 18 տարեկան է. նա վաղուց է աշակերտութիւնից դուրս եկել: Ջատ ժամանակ չէ որ վարժուհի զողակաթը նրանից մի նամակ ստացաւ: Ահա ինչ էր գրում.

«Իմ սիրելի հոգեոր մայրիկս, օրիորդ զողակաթ, երկնքից մինչև գետինք քեզանից շնորհակալ ենք, քո ձեռքը համբուրում ենք: Մայրիկս նոյնպէս մինչև վերջին շունչը՝ քո ձեռքն է պաշում, քո ոտներն է լիզում, քեզ կեանք ու արևշատութիւն է խնդրում:

Հիմի ես կատարեալ տան գլուխ եմ, իմ հօրօջաղի տղամարդն եմ: Այնքան իւղ ու պանիր ունինք, որ շատերին անփող բաշխում ենք, այնքան կաթն ու մածուն ունինք, որ ուզենանք մէջը լող կտանք: Մեր զամամ կովից երեք կով ու երեք եզն ունինք, բացի դրանցից բաւականին ոչխար ու տաւար ունինք:

Մեծ քրոջ ամուսնացը ինք, մի կտրիճ ու աշխատասէը տղայի տուինք. միւսներից որը տար-

տել է գիւղական ուսումնարանում, որն էլ շարունակում է: Ղումաշը նոր է գնացել ուսումնարան, բայց դեռ չգնացած՝ տանն ինձանից սովորել էր: Կուտիկս էլ կենդանի է, բայց, ափսոս, անպոչ. անիրաւ գայլը պոշը կերել է. հէնց որ հարցնում եմ, Կուտիկ, ուր է օրիորդը, չնիկս կողկոնձալով վազում է դուռն և աշքերը ձգում ճանապարհ: Դիտես, օրիորդ ջան, ինձ մինչև այսօր էլ այստեղ ամենքը Մանչուկ են ասում. մայրիկս, քո սիրոյ յիշատակին, արգելեց ամենքին ինձ Վահան ասել: Այս, օրիորդ, ամեն բանով զո՞ւ ու լի ենք, մեր աշքը մեր դռանն է, միայն զու ես պակաս: Երանիթէ թողնէիր քո նոր գնացած տեղը և նորից փոխուէիր քո հին տեղը:

Մնաս բարե, մեր բարերած. Աստուած մեր ձայնն երկնքից լսի և քեզ կեանք ու երշանկութիւն պարզեցի:

Խնդրում եմ երկու տող նամակով մեզ ուրախացնես:

Ղրկում եմ քեզ իմ ձեռով տնկած ծառերի առաջին բարը-պտուղը—կարմիր-կարմիր խնձորներ և անուշ տանձեր. մայրս էլ քեզ մեր գիւղի գովական շուջուխն ու ալանին է զրկում:

Մինչև գերեզմանս քեզ հաւատարիմ որդի և ծառայ Վահան Ամատունի, մականուանեալ

Մանչուկ»:



1061

0005211

2013



